**Աջակցություն պետական միգրացիոն ծառայությանը՝ Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի կառավարման համակարգի հզորացման և ապաստանի և միգրացիոն տվյալների վերլուծության և հաղորդակցության համապարփակ համակարգի ներդրման նպատակով**

## Ընդհանուր տեղեկատվություն

***Ոլորտ:*** արդարություն և ներքին գործեր
***Տևողությունը:*** 27 ամիս
***Իրականացման ժամկետ*** սեպտեմբեր 2012 –*նոյեմբեր* 2014
***Բյուջե:*** 1 մլն Եվրո

*Շահառու մարմին՝*

**Շահառու մարմին՝** ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Միգրացիոն պետական ծառայություն

*ԵՄ անդամ պետությունների գործընկերներ*:

**Գլխավոր գործընկեր՝** Շվեդիայի Միգրացիոն գործակալություն, Շվեդիա
**Կրտսեր գործընկեր** - Լեհաստանի Ներքին գործերի նախարարություն

## Ծրագրի նկարագրություն

***Նպատակ:*** Ծրագրի հիմնական նպատակն է մոտեցնել Հայաստանը ԵՄ՝ միգրացիայի և ապաստանի ոլորտի կառավարման օրենսդրությանը և լավագույն փորձին:

***Բաղադրիչներ:***

**Բաղադրիչ I:** Ապաստանին և միգրացիային առնչվող օրենսդրության ադապտացումըԵՄ օրենսդրությանը

**Բաղադրիչ II**: Միգրացիայի ոլորտում գործունեություն ծավալող պետական մարմինների միջև համագործակցության հզորացում և վերջիններիս արդյունավետության բարձրացում

**Բաղադրիչ III:** Միգրացիայի ոլորտին առնչվող տվյալների մշակման և հաղորդակցման ամբողջական համակարգի ստեղծում

***Ձեռք բերված արդյունքներ:***

Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք բերված հիմնական արդյունքները հետևյալն են՝

ա) Հայաստանում միգրացիայի և ապաստանի ոլորտը կառավարող օրենսդրության վերլուծության և համապատասխան առաջարկների ներկայացում: Իրավական մոնիթորինգի համակարգը ներդրված է:

բ) Հայաստանի կարիքների համար հարմարեցված միգրացիոն կառավարման արդյունավետ համակարգի կառուցման առավել հարմար միջոցների վերաբերյալ առաջարկությունները տրամադրվել են:

գ) Իրականացվել են ապաստանիևմիգրացիայի տվյալների մշակմաննևհաղորդակցության համակարգի ստեղծման կարիքների գնահատումևտեխնիկատնտեսական ուսումնասիրություն: Ծրագրի թիմը տրամադրել է համապատասխան առաջարկություններևխորհրդատվական աջակցություն:

**Լրացուցիչ տեղեկատվություն:**